

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբ.  
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.  
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.  
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են  
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.  
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ  
(Ազգայնական բանակաւ աւելթով)

Պրոֆէսոր Մարք երկրորդ անգամ պատասխանեց վրաց բանաստեղծ Ակակի Մերեթէլիին: Ներկայումս Եւրոպայի մեծ ծագած բանակաւ աւելթովի հետաքրքրութիւն է ներկայացնում: Մինչդեռ մէկ կողմից, գիտնականը, խոսում է գիտնականին յատուկ ստանալովութեամբ, հիմնվելով անվիճելի փաստերի վրա, առաջ բերելով այնպիսի հաստատութիւններ, որոնք ներթափանցում են կրիտիկայի, ստուգված են, անցել են գիտնական վերլուծող, գոյող բովից, միւսը, բանաստեղծը, փրկւած ոյժ է տալիս փանտազմային, ոտով գրվող փաթեթով է ժամանակակից և պատմական առասպելներ, առէ-կոսներ, էթնոգրաֆիկ բանաստեղծների խիտ ցանցի մէջ և հաւատում է կամ ցոյց է տալիս թէ հաւատում է այդ բոլորին մի մանկական պարզամտութեամբ, որ ներքին է համարվում մի բանաստեղծի համար: Պարզ էր, որ շարքովը պիտի լինէր բանաստեղծը. մեր ժամանակներում, փառք Ստոյնով, այնքան էլ դժուար բան չէ գտնադնել առասպելից եղելութիւններ, փաստը հեղեթից, թէ և առասպելները, բանաստեղծները, ստոր անուանարկութիւնները հազարաւոր ճգնաժամ կողմնակիցներ ու պաշտպաններ ունեն: Նա Մերեթէլիի շարքովը—այդ պարտութիւնը անխուսափելի էր: Իր պատմական մէջ բանաստեղծը ասել էր թէ հայերի օգտին խօսող գիտնականները կաշառված են հայերից. մնում է, որ նա այսուհետեւ անկողնի վրայ գրէր այդ ողորմելի միջնորդութիւնը: Մեր չինք մտնի բանակաւ մանրամասնութիւնները մէջ: Մենք միայն ուզում ենք գիտնաբերել այդ պարզ, որ տուեց պրոֆէսոր Մարք: Վերջին տարիներում մենք կանոնաւոր ելինք թէ ինչպէս նոյն իսկ բանաստեղծները, մի կողմ թողնելով սիրոյ և եղբայրութեան յարաբերական երկրները, իշան Պարսկաստան, զարդարելով մարդկային փոփոխութիւնը և ընտրելով անհոգ անհոգութիւնը, որոնք չեն հաշտվել այն պիտի լինէր: Թէ մարդը մարդու համար գալի չէր պիտի լինէր: Թէ բանաստեղծ և թէ պրոֆէսոր մարդկայինները վեր-

ջին տարիներում, ինչպէս յայտնի է, մի առանձին կատարութեամբ ընկած հայերի վրա: Հարկ էր ու մի հրէշաւոր ամբաստանութիւններ եղան հայերի դէմ, բայց արշաւանք գործողները ոչ ոք իրան պարտաւոր չէր համարեց խօսել փաստերով, բերել ապացոյցներ. մեղադրանքները միշտ մնացին բանաստեղծների, զրպարտութիւնների չըմանում և կրկնվելով հարկ էր ու մի տեսակ, դարձան կատարեալ անմտութիւն: Հենց այս հանգամանքն էր, որ զրկում էր կատարի մարդակերութիւնը թոյնից ու խայթից: Նա ազգայնականներ էլ չառ լաւ գիտէին այդ բանը, գիտէին որ ամբողջ ստոր ինստիտուտները զրկուելու համար որոշ, փաստակց մեղադրանքներ չեն հարկաւոր: Միայն պ. Մերեթէլի այնքան միամիտ եղաւ, որ չըզոյց հեշտ ճանապարհից ու փորձեց ելն ոչ ժամանակակից, գոնէ պատմական փաստերով հասկանալ իր ժողովրդին թէ հայերը ատելութեան արժանի են: Այդ միամտութիւնը գցեց նրան անհայտնութիւնների, առասպելների ճահճի մէջ, ուր և շարքովը գրական, անկողնական գիտութեան զէնքերով: Այդքան թեթեամիտ անձնապատկանութեամբ սկսած արշաւանքը ուրիշ մի բան չէր, եթէ ոչ զօնեղջուտական քաջագործութիւն:

Բայց տուած դասի խրատական կողմը այդ չէ: Պրոֆէսոր Մարք պարզեց աշխարհի առաջ թէ ինչ հայեացքների տէր է վրացի հայրենասէրը: Բանից դուրս եկաւ, որ Ակակի Մերեթէլիին այն երջանիկ չովնիտներէն է, որոնք իրանց ազգը համարում են երկնքի առանձին խնամքներով պատրաստված մի կատարելատիպ, թէ որ և պակասութիւնների, որ և արատից վրէժնացաւ և թէ ներկայումս: Այդ խնամքութեան տիրանալուց յետոյ հայրենասէրը դառնում է ամեն մի կրիտիկայի թշնամի և զինվում է նոյն իսկ գիտութեան դէմ, երբ սա համարձակվում է ապացուցանել թէ նրա հայրենիքն էլ ունեցել է պակասութիւններ: Ինչպէս և կատարեց Մերեթէլիին: Նզել են գիտնականներ, որոնք ասել են թէ վրացիները հայերից շատ բաւարար են փոխ առել: Մերեթէլի վրդովվում է դրա դէմ և ասում է, որ վրացիները փոխ են ասել այնպիսի բաներ, որոնք չեն եղել իրանց լեզուի մէջ—աւագակ, ազաւ և այլն: Նշանաւորում է որ վրացիները աւագակ, ժպտ չեն եղել: Գիտնականները ասել են թէ վրացիները սուրբ գիրքը առաջին անգամ թարգմանել են հայերէնից: Մերեթէլի էլ վրդովվում է և ասում, որ այդ թարգմանութիւնը եղել է ատորի լեզուից: Նա չէ ուզում, որ վրացիները հայից որ և քան վերցրած լինին: Մերեթէլի միշտ չեղում է այն

Շարժւած, ապրիլի 11-ին, Թիֆլիսի երկրորդ կարգի վաճառական  
Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ե Ս Ս Ի Ս Է Օ Ն Ե Ա Ն Ս Տ Ե Փ Ա Ն Ե Ա Ն Յ Ի

Մահվան քառանկերով օրը, Վ ա ն ը ի մ ա յ ը ե կ ե զ ե ու մ, պատարագից յետոյ,  
կը կատարվի հ ո գ ե հ ա ն գ ի ս տ, որի մասին հանգուցեալի մայրը, կինը, եղբայրները,  
քեռակներ և քեռիները յայտնում են ազգականներին և ծանօթներին:

### ԲՈՎԱՆԵՐԱԿՈՒԹԻՒՆ

Մինչև երբ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Չինական հայրենասիրութիւն. Ռուսաց դրամատիական ներկայացումները. Նամակ Ասորականից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ՍԻՍԱՒԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Կրեմլէ. Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր.—ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ.—ՀՅՈՒՍԵՒՆԵՐ. ԲՕՐՍՈՒ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Աղբար վճիռ:

### ՄԻՆՁՆԻ ԵՐԲ

Տխուր լուրեր են հասնում գաւառից: Շատ տեղերում հացի պաշարները հատել են, իսկ հացը թանկացել է: Ժողովուրդը անկայնութիւն է իր պարտքերը, համաձայն վերով վճարել ամեն տեսակ տոկոս, միայն թէ հաց ունենայ իր տանը: Մինչև հունձը դեռ մնացել է տափարակ տեղերում: Եւրոպայի քան երկու ամիս, իսկ սարահարթերում—չորս հինգ ամիս: Այդ երկար ժամանակամիջոցում միայն մի յարմարութիւն պիտի ունենայ ժողովուրդը, այն է թեթեւացել իր ծախսերը, գործածելով նոյնպէս կանաչներ, ընդդէմներ և կաթնային արդիւններ:

Նթէ մեր գիւղական ժողովրդի ներկայ կարողութիւնը միայն մի բացառիկ և պատահական երեւոյթ լինէր, մենք կարող էինք նրա վրա նայել իբրեւ մի անցողական դժբաղդութեան վրա, որի դէմ կարելի է կռուել միանուագ ժողովված նպաստներով և ապագայ տարիների անտեսութեամբ, բայց հացի կարօտութիւնը վերջին տարիները դարձել է մշտական, քրօնկական մի երեւոյթ և ընդհակառակը, բերրի ու հացաւատ տարիներն են կազմում իբրեւ բացառիկ և պատահական երեւոյթներ: Երբ երկրը տանեակ տարիներ առաջ անելի խաւար էր, չը զարդացած, բայց այն ժամանակ ազատ հողեր շատ կային և ժողովուրդը կուշտ էր, ունէր իր օրական ապահով ապրուստը: Այժմ, տասնիններ-

րորդ դարի վերջում, մեր առաջ կանգնած է մի ազգաբնակչութիւն, որը օրական հացի ապահովութիւնը չունի, և չէ գտել իր անտեսութիւնը բարեփոխում միջոցներ. այժմ կենքի ընդհանուր պահանջները մեծացել են և այն, ինչ բաւարար էր համարվում սրանից մի քանի տասնեակ տարի առաջ, այլ ևս չէ կարող գոհացնել նոյն իսկ գիւղի բնակիչներին:

Ծանր, անտանելի է տեսնել այդ ամենը այն ժամանակ, երբ առաջադէմ երկիրները բազմաթիւ ապացոյցներ են տալիս թէ ինչպէս կարելի է նպատակայարմար միջոցներով բարձրացնել ժողովրդի ֆիզիկական և բարոյական վիճակը: Ներսիսյան գործաւրանական կենտրոն մի ժամանակ այնպիսի թշուառ դրութիւն էր ստեղծել մշակ դասակարգի համար, որ վերջինս սկսել էր այլասեռվել և փչանալ, այնպէս որ ժողովրդի բարեկամները աղաղակում էին, թէ ազգաբնակչութեան զարգացումը վտանգի մէջ է: Սակայն ընդարձակ ծրագրով մշակված մի շարք բարենորոգութիւններ հանդէս եկան ամենայնամասն և եռանդուն կերպով մարտնչում քայքայել ազդեցութիւնների դէմ և հասան ցանկացած նպատակին: Հիւանդութիւնները և մահացութիւնը պակասեցին, մանուկ սերունդը սկսեց ստանալ բաւարար սնունդ, մշակը սկսեց վարել բաւարար կենքը և ազգաբնակչութեան վիճակի ընդհանուր մակերեւոյթը բարձրացաւ: Ժողովրդական այդ մասնայի միջոց նոյն իսկ սկսեցին դուրս գալ մարդիկ, որոնք բացի ֆիզիկական աշխատանքից ցոյց տուին և աչքի ընկնող մտաւոր կարողութիւններ:

Մասնայի սնունդը և մասնայի մտաւոր զարգացումը—այն հիմնական խնդիրն է, որ զրկված է մեր ժամանակի հասարակութեան առաջ և պահանջում է զբաղմունք և լուծում: Հարցը սուր, սպառնալից կերպարան է ստանում:

### Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

### Ա Ր Գ Ւ Ր Վ Ճ Ի Ռ

### Պ ա Ր Ի զ, մարտի 23-ին

Նրեակայեցէք մի թշուառ աղջիկ, որ դժբաղդութիւն է ունեցել ծանայել մի տղամարդ, նրան իր երազներէն իր դրամանշներին առական դարձրել: Նրան նուիրել իր սէրը, իր անձը, իր պատիւը: Տղան ընդունում է այդ սէրը և ի չարն է գործ դնում երկուստեքը աղջկայ—Լուիզ Մենաբի—հաւատարմութիւնը: Նա նրան իր խաղաղքն է շինում՝ ընդունակ միմիայն իր ստոր ինստիտուտները յազգեցնելու: Ապա ձգում, հեռանում է՝ թողնելով թոյլ, անպաշտպան էակին անել դրութեան մէջ:

Օրիորդը ծնում է... Ինչ անպատուութիւն: Մանկան հետ միասին ծնունդ է առնում խեղճի համար դառնութեան մի նոր աղբիւր: Ո՛ր է մանուկի հայրը, ով է նա: Անյայտ ոմն, մի գլուխ, մի ստոր արարած, որին ֆրանսիական օրէնքները չեն հաշտվում, նոյն իսկ պաշտպանում են: Հասարակութիւնը, կոյր ամբողջ մոռանում է ամեն բան, նկատողութեան չէ առնում ոչ մի հանգամանք: Աղջիկն է միայն մեղաւոր, պիտում է նա, աղքատ է միայն նա ան-

խայ կերպով դատաւիտում, ծաղրի, նշանակի առարկայ դարձնում: Այդպէս են, անշուշտ, վարվել և Մենաբի հետ:

Անմեղ զոյճ կրում է այդ բոլոր անարգանքը, հաշտվում է դառնութեամբ իր անբնական դրութեան հետ և գլուխ է խոնարհում տխուր իրականութեան առջև:

Բայց նրա ցուր մէկը չէր միայն. մի նոր հոգն էլ է անկախում՝ երեխային պահել: Ինչն աղքատ ընտանիքի դաւակ, դուրս ներկայումս որ և է միջոցներէն: Բացի մանուկից օրիորդ Մենաբը պիտի պահէ և իր պառաւ մօրը: Մի ամբողջ ընտանիք ջանքի աղվից չլինէր: Նա անտրտուն, յօժար սրտով և եռանդով կատարում է իր պարտքը, որպէս երախտագարտ աղջիկ և որպէս քնքոյշ մայր: Մենաբ յայտնի էր Շարլի համայնքի մէջ իբրեւ գործող և ջանասէր: Նա հաշտարար էր, հոգում, իր ընտանիքի պահելը հալալ, երեսի քրտինքով հայթայթում: Այդպէս մայրը ծայրին հասցնելով նրանք մի կերպ քարշ էին տալիս իրանց գոյութիւնը:

Բայց աշխատանք խեղճ աղջիկը միշտ չէր գտնում. գործը յաճախ պակասում էր: Ինչ անել: Տեղական բարեգործական ընկերութիւնն էր մի փոքր նպաստ հասցնում, շատ փոքր՝ չաբախական 6 փունտ հաց և քիչ էլ կաթ, հազիւ մի օրվայ պաշար:

Նա հաւ մի գեղեցիկ օր փոքրիկ ընտանիքը դուրս է գործից: Նրկու շարժվալ ընթացքում

օրիորդի ամբողջ աշխատանքի արդիւնքը եղել է 12 սու, ասել է 30 կոպեկ: Զուրկ գործից, դուրս մտնող գնեւոր որ և է միջոցից, տանն էլ ուտելու ոչ մի բան, կտոր հացն անգամ պակասում է: Կաթի մնացած մի քանի կաթիլներն են տալիս երեխային: Օրը անցնում է, ընտանիքը դեռ նշխար չէ դրել բերանին: Անցնում են քօպեկներ, ժամեր, երկու, երեք, վեց, տասն և երկու ժամ: Ընտանիքը դեռ ծով է: Ինչ անել: Գարձեալ տառն և երկու ժամ էս. ոչինչ չը կայ... Նրեակայեցէք էք այն երկու կողմ տխուր, դաւկացած դէմքերը, մանկան աղեղնալի հայեացքը, արտաստակից աչքերը՝ ուղղած դէպի իր ապաւանդում մայրը: Պատկերացնում էք այդ ուղտաձիկ տեսքաւոր: Նրեանուն և վեց ժամ ոչինչ, ոչինչ չուտել, երեսուն և վեց երկար ու ձիւ ժամեր: Զգում էք արդեօք այս երկու բառի ահեղ խնամք իր ամբողջ էութեամբ՝ «հաց չը կայ»: Հաց չը կայ. հեշտ է ասելը, չէ... Ինչ անել մտքերն են, ով գիտէ, անցնում երկու մօր գլխով: Ինչ արած. որ ջուրն ընկնել: Մենաբը իսկ այն անմեղ փղոքիկը: Նրան ևս... Նրիտաւարը մայրը ցնցվում է ամբողջ մարմնով: Ինչ միջոցի գիմը ուրեմն:

Օրիորդ Մենաբը մի կերպ խաբխբելով հանգստացնում, քնայնում է երեխային: Դուրս է գալիս փողոց, տեսնում է հայթայթ խնամքով զարթած հացեր: Նա մօտենում է ինստիտուտաւար, ձեռքը մեկնում, մի հաց վերցնում, բե-

րում տուն:

—Դու գողացար, հարցնում է մայրը:

—Այո:

—Ո՛հ... Ահա կը գան քեզ բռնելու:

Բնական չէր աղջկայ արածը. ինչ կասէր, այնպէս չէ: Բայց տեսէք, որ մարդկային օրէնքները և օրէնադէտները այլ կերպ են դատում: Նրբ մի մայր, թեւադրում են նրանք, մի ամբողջ ընտանիք տուած, օրերով, սովածան լինելու վրա է, նա պարտ է, ըստ յիշեալ օրէնքների, լուռ ու մունջ կերպով... մեռնել: Ահա ձեզ մարդկային արդի իրաւաբանական արդարութիւնը:

Օրիորդի մայրը չէր սխալվել: Դալին են պաշտօնական անձինք, թուղթ, արձանագրութիւն, ապա մի քանի օրից յետ օրիորդին քարշ են տալիս դատարան:

Բայց, բարեբախտաբար, մեր թշուառ երկրագունդը դեռ բոլորովին դուր չէ բարի մարդկանցից, որ մի կողմ թողնելով անգութ, չոր ու ցամաք, հնացած օրէնքները, երբեմն առաջնորդվում են միմիայն իրանց խեղճ օրէնքներով: Այդ հաղաւթականից են և Դատո-Տիէրի դատարանները, որոնք քննեցին Լոյզ Մենաբի գողութեան գործը:

Դատարանի կայացրած վճիռը Ֆրանսիայի ներկայ սկանդալների պաշտօնական խաւար մըթնորդի միջոց գրեթէ մի լուսաւոր աստղ էր, որ բարձրացաւ: Այնքան անսպասելի, այնքան բա-

հանգամանքի վրա, որ հայերը կրօնական ատե-  
լութիւն են ունեցել զէպի վրացիները. և երբ  
նրան ցոյց են տալիս թէ վրաց պատմագրու-  
թիւնները մէջ արձանագրութեան ատեղութեան  
աւելի տեղեւոր և վայրենի փաստեր, նա ասում է  
թէ դրանք հանաքներ են: Մի խօսքով նա մի-  
ջից կէս է դառնում ցոյց տալու համար, որ  
վրացիները շատ և շատ բարձր էին հայերից թէ  
մտաւոր և թէ բարոյական յատկութիւններով:  
Նւ այդ հայրենասիրական նպատակին համեմա-  
համար նա փաստեր չունի, այլ միայն բանա-  
ստեղծի ֆանտազիա:

Համարել կրօնական թշնամութիւն, երբ նա  
չէ չղուժ ազգային սնապարծութիւնը, կատաղել  
այն հանգամանքից, որ մի ազգ միւս ազգից  
քաղաքակրթական դասեր է առնում կամ առել  
է երբ և իցէ, տոնալային անպատուութիւն հռչա-  
կել զիտութեան ջանքերով լոյս հանած ամեն  
մի պակասութիւն—դա մի վտանգաւոր մոլո-  
րութիւն է, մի ինքնասպանութիւն: Նւ այդպիսի  
հայրենասիրութիւնը մենք անուանում ենք չի-  
նական հայրենասիրութիւն: Նթէ կայ մի հակա  
կոթող, որ ցոյց է տալիս թէ ինչ է ազգային  
սնապարծութեան միջոցով ինքնասպանութեան  
համեմալ—դա Ձինաստանն է: Մինչև այժմ Ձի-  
նաստանի հիմքերը փորոք, գոյութիւնը վտան-  
գող խոցը այն մոլորութիւնն է թէ չինա-  
նակ երկնքի ողբի է, իսկ մնացած ազգե-  
րը բարբարոս են եղել և բարբարոս էլ մնում  
են: Մի ազգ կարող է մեծագործ լինել, և  
բնկել զիւտեր անել, ցոյց տալ ընդհանակու-  
թեան փայլուն նշաններ: Բայց եթէ այդ ազ-  
գը կուրացած է սեփական պարծենկոտութիւ-  
նից, եթէ գտնվում է այն մահացու մոլորու-  
թեան մէջ թէ ինքն է միայն որ կայ, թէ բնու-  
թիւնը իրան տուել է միշտ լաւ, միշտ զեղեցիկ  
մնալու բացառիկ կարողութիւն,—այդ ազգը պի-  
տի քարանայ, անշարժանայ, այդ ազգը նոյն  
խիչ կարող օգտվել իր գիւտերից, իր ընդու-  
նակութիւններից: Նւ իրաւ, նայեցէք Ձինաստա-  
նին և տեսէք ինչպէս է մի անգլիացի գործիչ  
ընտրուում չինական քաղաքակրթութիւնը: Ձի-  
նայիները բոլոր ազգերից առաջ գտան վառ-  
ղի, կողմնացոյցը, տպագրութիւնը: Բայց ինչ  
օգուտ քաղեցին նրանք այդ երեւելի գիւտերից:  
Վառօգից նրանք միայն փշաւներ և անմեղ  
հրավառութիւններ ստեղծեցին: Արեւի մօտ լու-  
ղացող հնադարեան նաւակներ—անա ինչ ար-  
դիւնք ունեցաւ կողմնացոյցի գիւտը: Իսկ տպա-  
գրական արեւնոր գիւտը սովորեցրեց նրանց  
պալի միայն Կոնֆուցիոսի քաղաքնոյ վարդա-  
պետութիւնը: Մինչևեւ նոյն գիւտերը ուրիշ  
ազգերի մէջ հիմք դրին ժամանակակից քաղա-  
քակրթութեան:

Ուրեմն, նոյն իսկ բնատուր զեղեցիկ յատ-  
կութիւններով օժտված լինելն էլ իրաւունք չէ  
տալիս մասնավոր ազգային սնապարծութեան  
ախտին: Թերթեցէք քաղաքակրթութեան պատ-  
մութիւնը և առաջագիտող ազգերի գլխին միշտ  
կը տեսնէք այնպիսիներն, որոնք սովորում են  
ուրիշներին, որոնք յանցանք են համարում ծած-  
կել իրանց պակասութիւնները, անձնատուր լի-  
նել ծուլութեան, բաւական համարելով Արիւով  
սաղերի մեծամասնութիւնը: «Մեր պապերը ազա-  
տեցին Հռոմը»: Առաջագիտութեան օրէնքը այն-

ցաւով էր նա, որ այսօր Շատո-Տիւրի նախա-  
դաշ ընդհանուր համակրութեան առարկան է:  
Դատարանը գործը մանրամասն ըննելով, արդա-  
բայնում է աղկլանալ:

Նա իր վճռով և մանաւանդ առաջ բերած  
արդումնադրանքներով ներկայ հասարակութեան  
հիւանդ և աննորոգեալ կաղնակերպութեան  
գլխին, կարծես, մի «պահպանիչ» է կարգում և  
«գող» մօրը արդարացնելով, ամբողջ հասարա-  
կութիւնը դատապարտում: Ինքնեղ զատեցէք:  
Ահա դատարանական ոճով արտայայտված պեր-  
ճախօս վճիռը:

«Ի նկատի առնելով»

«Որ այն րօպէին, երբ ամբաստանողը հա-  
թուի Դ-ի մօտից մի հաց է վերցնում, փող չու-  
նէր և որ իր ստացած ուտելիքներ երեսուն և  
վեց ժամից ի վեր հատել էր,

«Որ այդ ժամանակամիջոցում ոչ ինքը և ոչ  
իր մայրը ոչինչ չէին կերել» երեսնային թողնելով  
տանը եղած կաթի մի քանի կաթիլները:

«Որ ցաւով է, որ մի լաւ կաղնակերպված  
հասարակութեան մէջ, նրա անդամները մէկը  
և մանաւանդ ընտանիքի մի մայր կարողանայ  
հացի պակասութիւն զգալ ոչ այլապէս, քան իր  
յանդանքով:

«Ի նկատի առնելով, որ թշուառութիւնը և սո-  
վածութիւնը ընդունակ են խիշ մարդկային իւ-  
րաքանչիւր էակից իր ազատ կամքի մի մասը և  
նուազանել նրա մէջ, մի յայտնի չափով, բա-  
րիկ և չարի գաղափարը:

այն է, որ թուր պապի փէշերի տակ չէ մնում  
անշարժ: Մի ժամանակ Լոնդոն 300 սպար-  
տացիներով պաշտպանում էր Թերմոպոլիսի կիճը  
Քսեքրէսի միլիոնաւոր բանակի դէմ և անմա-  
հացաւ անձնագոհութեան պրանչիլ օրինակ տա-  
լով, իսկ անցեալ տարի նոյն Լոնդոնի թու-  
ները նոյն տեղերում անկարգ ու անկանոն  
փախչում էին թիւրքերի առաջ: Դժբաղդ է մի  
ազգ, որ սրբագործում է իր անցեալը և միայն  
ու միմիայն նրանով է ապրում:

Ոչ, չինական հայրենասիրութիւնը—յանցանք  
է: Իւրաքանչիւր մարդ, որ անկեղծ կերպով ու-  
ղում է ծառայել իր հայրենի երկրին, իր ժող-  
վրդին, պիտի սարսափէ այդ յանցանքից: Ամե-  
նամեծ ծառայութիւնը, որ կարելի է մատու-  
ցանել մի կենդանի ազգին, քաղաքական ակտից  
ազատել է. քաղաքումը ինքնասպանութիւն է:  
Նւ այդ ինքնասպանութիւնը երբեք չի սպառ-  
նայ ազգի գոյութեան, երբ մի կողմ է թողն-  
վում սնապարծութիւնը, երբ հաստատվում է  
ճշմարիտ առաջադիմութեան գիտակցութիւնը:  
Թողէք լոյս սփռվի ձեր անցեալի և ներկայի  
վրա. մի վախճի ձեր վէրքերից, այլ խնամքով  
ուսումնասիրեցէք նրանց, որպէս զի ճար գրա-  
նէք: Իսկ ճար գտնել կարող էք այն ժամանակ,  
երբ ոչ միայն կը խոստովանէք ձեր պակասու-  
թիւնը, այլ և կընդունէք ուրիշի առաւելութիւ-  
նը: Սովորելը մեղք չէ. մեղքը և մեծ մեղքը այն  
է, երբ դուք կարծում էք թէ սովորելու կարիք  
չունէք:

ՌՈՒՍԱՅ ԴԲԱՄՍՏԻԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Կօրէի դրամատիկական խմբի ներկայացում-  
ները սկսվեցին երկուշաբթի, ապրիլի 6-ին: Խա-  
ղում էին Գօգոլի «Բեկիզոր» կոմիդիան, որի բո-  
վանդակութիւնը յայտնի է ուսն գրականութեան  
փողը ի շատէ ծանօթ ամեն մի հայ: Ներկա-  
յացումը անցաւ մեծ անսամբով: Ռուս Տար-  
բաբին Նիւստակովի դուռը դրեւ տաղանդա-  
ւոր կերպով կատարեց Սվետլով, որ սակայն  
այդ խելագատակը դատարկ և անկեղծ սքողով  
«տեղ փչող» երիտասարդին աւելի հասակաւոր  
գուրու բերեց, քան պէտք էր (հեղինակի առա-  
ջադրանքով նրա տարիքը որոշված է 22—23):  
Քաղաքացիութիւնը Սվետլովի-Բանիստովսկու դերը  
կատարող Գրեկով խելացի և փորձված դերա-  
սան է և նրա խաղը այդ օրը կարելի էր միան-  
գամայն բաւարար համարել, եթէ չը լինէր  
խելգլխած ձայնը, որի պատճառը տարիքը  
պէտք է համարել: Տիկին Բանիստովսկայա բա-  
ղաքացիութիւնը կնոյ և Կօչեկա՝ նրա աղկլայ դերում  
միանգամայն բաւարար էին. շատ լաւ էր Նիւս-  
տակովի ծառայել: Օսկայի դերում Սաշին, որ այդ  
դերը կատարում էր Վեռնովսկու ակադեմիան  
պատճառով: Լաւ էին Նախովի (Ջանիստովսկա)  
և Շարովսկայա (Պօլիստովսկայա). վատ չէին Մի-  
սէկ (Նուսով), Իւրիսկ (Լեանովսկա-Տեանովսկա),  
համեմատաբար թոյլ էին Տուգանով (պօլովսկայ-  
ստեղ Շպետսկայ), Սմոլնսկով (Գօգոլսկայ) և  
Սոսկովին (Բօգոլսկայ):

Երկրորդ օրը, ապրիլի 7-ին, Սոսկովայի խում-  
բը ներկայացրեց «Մայրաքաղաքի միջնորդը»  
անունով կոմիդիան, որ իսկապէս մի ֆարս է և  
որ արժէ տեսնել միայն այն դէպքում, եթէ նա

«Որ սովորական պարսպաւոր մի գործողու-  
թիւն շատ բան է կորցնում իր խաղաղ բնու-  
թիւնից, երբ այն անձը, որ մեղանշում է,  
գործում է մղված լինելով միմիայն սովորա-  
կան պահանջից» ձեռք բերել մի ամենամանրա-  
մեղ մտնող, առանց որի բնութիւնը մեքում է  
գործել տալ մեր ֆիլիքսական կաղնակերպու-  
թիւնը:

«Որ խաղաղ զիտասիրութիւնը առաւել ևս  
է թեթեւանում, երբ սովածութեան դառն տան-  
ջանքների վրա գալիս աւելանում է մի մօր  
այնքան բնական ցանկութիւնը՝ ազատել նրան-  
ցից ջանք կերելային, որին պահելու բեռը իր  
չլինելն է:

«Որ Մենար առաջարկում է վճարել հացթուխ  
Պ-ին, եթէ գործ կարողանայ գտնել»:

Այս պատճառների հիման վրա դատարանը  
արդար է նկատում օրիորդին և առանց դատա-  
բանական ծախքերի արձակում:

Կեցցես դու, բարի դատաւոր, որ քաղութիւն  
ունեցար մի աղաքի վեհանձն, արդարադատ  
վճիւր կայացնել: Գո վճիւր մի փորձել միմիայ-  
նութիւն է, մի սփոփանք պղծված սրտերի, սփո-  
փանք նեղեալ և հաշտվածների համար և մի  
դառն դատ, մի ապաստի ետանք բուրժուա-  
րիային:

Այս արդար դատաստանը երկար միահամուռ  
ծախհարութեամբ ընդունեց ֆրանսիական ամ-  
բողջ մամուլի կողմից: Բայցաւորութիւն կաղնու-  
ներ ևս եղան, ինչպէս «Journal des Debats» և

խաղաղվում է այնպէս հիանալի կերպով, ինչ-  
պէս խաղաղվեց այդ օրը: Նոյն աշուղթեամբ  
անցաւ և «Роксвотъ» վոզովիլը:

Երրորդ օրը, ապրիլի 8-ին, ներկայացրին  
Օտորովսկու «Տաղանդներ և երկրպագուներ» կո-  
միդիան և «Աշակերտական զոյգ» վոզովիլը:  
«Տաղանդներ և երկրպագուներ» Օտորովսկու վեր-  
ջին գործերիցն է և պատկանում է թողբերի  
թիւին, սակայն հեղինակի խաղը և համակերպի  
տաղանդը այդ պիէսայում էլ տեղ-տեղ արտա-  
յայտվում է բուռն կերպով, ինչպէս, օրինակ,  
վերջին գործողութեան մէջ: Այդ պիէսայի մէջ  
մեղ ամենից շատ դուր եկան Սվետով (բեմիս-  
տեղի օգնական Նաթով) և Տրուբեցկոյ (նոր  
համալսարանի աւարտած Մեղուով), մանաւանդ  
վերջինը, որ ստեղծեց իր դերից գագաթա-  
նական ուսանողի տիպ: Սվետով առանձնապէս  
լաւ էր վերջին գործողութեան մէջ բարեբ-  
թի զգացված ճառն ասելու: Գլխաւոր հերո-  
սուհու, սինյակ դերասանուհու դեր կատարող  
Ազադարովային չափովեց գորեղ դրամատիկ  
մտցնել իր դերի մէջ, թէ և նրա խաղը բաւակա-  
նաչափ մոտածված էր և զգացված: Նրա մօր  
դերը տաղանդաւոր կերպով կատարեց Գար-  
վիսկա. լաւ էին իրանց դերերում Գրեկով (դե-  
բաւանդակների երկրպագու իշխան Գուրեպով),  
Օմուսովա (դերասանուհի Սմոլնսկայա) և Սաշին  
(անտրուպոլոգ Միլոսկով), որ սակայն շատ ցած  
էր խօսում այս անգամ. վատ էր Մոսկովին երի-  
տասարդ վաճառական Վասիլայի դերում. թող  
էին Տուգանով (ատորձանաւոր Բակին) և Նա-  
կովիլ, որ հարուստ կալուածատէր և պաշտօ-  
նավոր կալաքիտա Վերնովսկովի տիպի տեղ  
տեղեց սովորական վաճառականի տիպ. միանգա-  
մայն անսամբել էր Իւրիսկի արագիլ Գրեկովի  
դերում: «Աշակերտական զոյգ» դատարկ վոզ-  
ովիլի մէջ վատ չէին Մոսկովին և Վարաւարովա և  
շատ լաւ էր Սմոլնսկայի, որ տաղանդաւոր կեր-  
պով կատարեց սիրահարված գիմնադիտի դերը:  
Երբ անգամ էլ լիտորոնը այն աստիճան  
լի էր, որ ներկայացման կէսից արդէն ան-  
կարելի էր գտնել ծրագիրներ: Հասարակութիւ-  
նը գլխաւոր դերակատարներին վարձատրում էր  
բուռն ծափահարութիւններով, այն զեղաբուհ-  
տական տպագրութեան համար, որ ստանում  
էր նրանց խաղից և որ անուշտ աւելի զօրեղ  
կը լինէր, եթէ հասարակութեան անձնագրա-  
մասը ժամանակին դար թատրոն և անտրակու-  
ներինց յետոյ ժամանակին բռնէր տեղերը:

Ս. Յ.

ՆԱՄՍԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Մարտի 24-ին  
Մեր քաղաքի քաղաքացի, անշարժութեան  
մասնավոր հասարակական կեանքում ուղաւաղ  
նորութիւնը կազմում է Աստրախանի Հայրենաց  
Բարեգործական ընկերութեան հաստատութիւնը,  
որ իր գործունէութեան սկիզբ դրեց մարտի  
12-ին, բանալով իր անդամների նիստը օրիոր-  
դական դպրոցի դահլիճում: Ներկայ էր կանանց  
մեծ թաւանք ինչպէս անդամուհիներ և հանդիսա-  
կաններ: Ժողովին հրաւիրված էին Արխանգէս  
արքեպիսկոպոսը և մի քանի ուրիշներ: Տիկին Մ.  
Ելզարեանից ժողովի նախագահուհի ընտրելուց

Մէլին օրգան «République Française», որանք  
մեղադրում են դատաւորին: Սա պարտաւոր էր  
դատապարտել: Իւրաքանչիւր յանցանք արժանի  
է պատժի, բացառանում է արդարաւոր «Dé-  
bats»: Դրան հակիրճ պատասխանում է դատա-  
ւորը: «Սա կարծում եմ, որ նրա հեղինակը մի  
պայպիսի յօդուած չէր գրել, եթէ ինքը երեսուն  
և վեց ժամ կերած չլիներ»:

Մամուլին ձայնակեց հասարակութիւնը: Ա-  
ռանց մի օր և իցէ առաջադրված սկսեցին  
տեղալ առատ նուիրատուութիւններ յօդուած այն  
քաղաքացի: Համակրութեան առարկայ է մաս-  
նաւորապէս դատաւորը: Տալով մի այնպիսի բարձր  
բարոյական վճիւր, որի նմանք ֆրանսիական դա-  
տարանական տարեգրութիւնների մէջ դեռ չէ  
արձանագրված, հասկանալի է, որ հեղինակը  
կարծանաւոր ընդհանուրի համակրական ցոյցե-  
րի: Բազմաթիւ նամակներ են թափվում նրա  
հասցէին: Ֆրանսիայի դատական կողմերից չնոր-  
հաւորում, հիացած գովում, խրախուսում են: Կա-  
նաչք, բանաւորներ, բոլոր ճնշվածները խառնով,  
միացել են այդ ինքնաբերական անկեղծ ջերմ ցոյցի  
մէջ:

Այդ նամակների թուում, յայտնում է դատա-  
ւորը «Aurore» թերթի մի քննադատորին, կան  
այնպիսիները, որոնք, երգվում եմ ձեզ, արտա-  
տուրով լցրին իմ աչքերը և որոնց չեմ կարող  
առանց կոկորդոս սեղանի նորից կարգաւ: Նս  
չէի սպասում, որ այնքան հասարակ և ան-  
չափ բնական վճիւր այնքան արժուէ հանէ: Մենք

յետոյ կարդացվեց ընկերութեան նոր կանոնադ-  
րութիւնը՝ 54 յօդուածից բաղկացած: Երեսայ, որ  
ընկերութեան նպատակն է՝ օգնել Աստրախանի  
հայ չքաւոր դասին, զիտաւորապէս կանոն  
հետեւալ ձեւով. 1) Մուտք, հագուստ, և հարկ-  
ւոր դէպքում, դրամ մատակարարել: 2) Անդր-  
մնացածների համար գործ կամ ծառայութեան  
տեղ գտնել, իսկ չքաւոր արհեստաւորներին մի-  
ջոց տալ գործիչներ և նիւթեր ձեռք բերելու և  
նպաստել դրանց ձեռագործները արդիւնաւոր  
կերպով վաճառ հանվելուն: 3) Բժշկական պի-  
տքներով օգնութիւն հասցնել չքաւոր հիւանդ-  
ներին անհում, նոյն իսկ բժշկի հեղուկութեամբ,  
մինչև անգամ հարկը ստիպվածին պէս այդպիսի  
ներին՝ իր հաշուով տեղաւորել հիւանդներում:  
4) Հիւանդներին, դառաւաններին տեղաւորել  
անկեղնայիններում, խնամատար անհում, իսկ  
մանկահասակներին գետեղել որդանոցներում:  
պատարաններում, արհեստանոցներում, գար-  
ներում: 5) Դիւրութիւն և միջոցներ տալ խնա-  
մելու և դատարանակեղ ուրբերին, չքաւոր, ան-  
յայտ ծնողներ գտնելներին: 6) Ժողովրդի մէջ  
բարոյական բնաւորութիւն ունեցող զրեւոր տա-  
րածել: Նւ 7) միջոց տալ չքաւորներին իրանց  
հայրենիքը վերադառնալ: Վերջինչալ պատա-  
ւորութիւնները զրուս բերելու համար ընկերու-  
թիւնը իրաւունք ունի բանալ հասարակական  
ձաշարաններ, թէյարաններ, ընդհանուր օթեան  
ներ, հիւանդանոցներ, բուժարաններ, կար ու  
ձեռք, ձեռագործի և խոհարարական դասընթաց-  
ներ, այլ և հասարակական ընթերցարաններ  
գրադարաններ, ի հարկէ այդ բոլորի համար  
պատշաճաւոր թոյլտուութիւն ստանալուց յետոյ:

Ամստրախանի ընկերութեանց յետոյ, ներկայ  
եղողները հրաւիրվեցին անդամուհիներ գրվելու  
5 ր. վճարով: 75 հոգի անգամ գրվելով, ընտրե-  
լու իրաւունք ստացան և կատարեցին վարձու-  
թեան անդամուհիների ընտրութիւնը, գալորնի  
քուէարկութեամբ: Տասնորոս քուէարկողները  
վարչութիւնն անդամուհիների ընտրվեցին եօթը  
հոգի, տիկիններ՝ Աննա Թիւրեանց, Սերանդ  
Մելիքեանց, Մարիամ Ելզարեանց, Հեղինէ  
Աստուանց, Աննա Սուրբաբեանց, Վառվա-  
ռէ Լիւստովանց, օրիորդ Գայանէ Բուդաղեանց  
և անձնատիրանորդուհիներ՝ Սօֆիա Միլոս-  
մեանց, Մարիամ Մուրդուգեանց և Սօֆիա Պար-  
մանեանց, որոնցից տիկիններ Ելզարեանի և Լի-  
անովեանի հրաժարվելու պատճառով, վարչու-  
թեան անդամուհիների կարգը անցան Միլոս-  
մեանց և Մուրդուգեանց անձնատիրանորդուհի-  
ները: Հաշուեկեսներ ընտրվեցին տիկիններ՝ Մա-  
նուշակ Նարբեանց, Սօֆիա Ֆրանսուզեանց և  
օր. Հեղինէ Ելզարեանց:

Թէ որքան աղոյ է ընտրութիւնը, այդ ցոյց կը  
տալ ընտրվածների անձուէր, անշահասէր գոր-  
ծունէութիւնը, եռանդը և լրջութիւնը: Բայց  
գործի արդուրութեան համար դեռ փոքր է ըն-  
տրվածների արժանիքն ու ընդունակութիւնը.  
այստեղ կարելու է նաև ընտրողների աշակցո-  
թիւնը, այսինքն՝ Աստրախանի հայ կանանց ընդ-  
հանուր մասնակցութիւնը: Աստրախանցի հայ  
կանայք, ընդհանրապէս ձեռանից է կախված այդ  
ընկերութեան անդամուհիների ընտրվածը: Դուք  
կանայք, միշտ գանգատվում էք, որ դաւանեք  
չունէք, ձեր կեանքը միակերպ է անցնում, ձեր

հնազանդվել ենք միմիայն մեր խղճին: Սրա հա-  
մար վարձատրութեան, անտարակոյս, ես չեմ  
արժան: Բայց հասարակութեան կարծիքը ծա-  
ղիկներով է ծածկում իմ վճիւր: Բարի, ես նր-  
բանց ընդունում եմ»

Խօսքը կարճանելով օրվա հերոսուհու վրա, դա-  
տաւորը հետեւեալ կարծիքն է տալիս. «Նա մի  
շատ քաղաքակրթ է, աղկլի—մայր: Նա աշխա-  
տանք է և սիրում է իր երեխային: Նս ցան-  
կացայ վտանգի և խնամալ՝ արդե՞ք նա չէր ըն-  
րել իր մանկանը դատարան, որ նրան, մեր գո-  
րովը չարժեքը համար, իրեն արգումենում ծա-  
նայեցինէ: Դատարանի նիստից յետոյ ես նրան  
կանչեցի իմ կարնէտը և խօսեցի իր գրութեան  
մասին: Փորձելու համար թէ ինչ կը պատաս-  
խանէ ինձ, հարցրի:

—Ինչու չէք ձեր երեխային գետեղում հասա-  
րակական աղբատարանը:  
«Նա ինձ ոչինչ չը պատասխանեց. միայն նա  
յեց ինձ՝ բողբոլին գոհնաւած, դէմքը չղկի-  
ված և սկսեց հեկկոտալով լալ: Նս գրեթէ փո-  
մանցի իմ փոքրիկ փորձի համար: Վերջինչ  
ես հաստատ համոզվեցի նրա զգացմունքների  
անկեղծութեան նկատմամբ»:  
Նւ դեռ բանի, քանի այսպիսի խելք ու թը-  
ւատ ընտանիքներ կան, որոնք հեծում են այն  
կամ այն անկեղծում՝ բոլրիկ, մերիկ, կիտալոնոյ  
վիլը ծուած և սրան-նրան ձեռք կարկաւած...  
Մինչև երբ... Սերբ



Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13